ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսանողների հետ արդյունավետ աշխատանքի ուղեցույց

դասախոսների և ուսումնական գործընթացի կազմակերպիչների համար

Երևան 2019

Հաշվետվություն – առաջարկություններ

Ուղեցույցի մշակման համար հիմք են հանդիսացել՝

- Ուսանողների շրջանում իրականացված «Դասախոսի և առարկայի գնահատում» խորագրով հետազոտության հարցաթերթերում ուսանողների կողմից բաց հարցերին տրված պատասխանների վերլուծությունը,
- Համալսարանի ներքին շահակիցների հետ անցկացված ֆոկուս-խմբային քննարկումները, տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ իրականացված SWOT վերլուծությունները:

Խմբագիրներ

Մարիամ Մովսիսյան
Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն
Էլեկտրոնային հասցե՝ m.movsisyan@anau.am

Արա Ամիրյան
ՈԳԱ որակի կառավարման բաժնի վարիչ
Էլեկտրոնայի հասցե՝ ara.k.amiryan@gmail.com

Հեղինակ

Լիլիթ Ավդալյան
ՈԳԱ որակի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
Էլեկտրոնային հասցե՝ l.avdalyan@anau.am

Նախաբան 5
Հեղինակի խոսք 6
ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ 7
«Դասախոսակենտրոն» մոտեցումն ուսանողների շրջանում 7
Ուսանողի պատկերացումները յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ 7
Ուսանողների մասնակցությունը մասնագիտական և առարկայական կրթական ծրագրերի բարեփոխումներին 8
Առարկայի և մասնագիտության նյութատեխնիկական կարիքների գնահատում ... 9
Մասնագիտական գրականություն, հայերեն 10
ՈՒսանողի կողմից կրթական գործընթացի ընդհանուր պատկերի՝ փազլի հավաքում 10
Անկողմնակալ, չանձնավորված վերաբերմունք ուսանողների հանդեպ 10
Բուհում ընթացող գործընթացների տեսանելիության բարձրացում ուսանողների շրջանում 11
Լեկցիա գրելը՝ հանուն ոչ էլեկտրոնային նյութերի ձեռքբերման 11
«Դասից դուրս» կատեգորիայի ըմբռնում 11
Քննություններ. լինել թե չլինել 12
ԵՐԿՐՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ 13
Դասախոսը պատասխանում է ուսանողների հարցերին 13
Դասի մատչելի, հասանելի, լավ բացատրելը 13
Դասախոսի դասավանդման ոճը, մոտեցումը 13
Դասավանդման նոր մոտեցումներ, մեթոդներ 14
Դասախոսն աջակցում է ուսանողին 15
«Դասից դուրս» աջակցություն, շփում 16
Ուսանողը՝ որպես ակտիվ մասնակից 16
Պրակտիկա, գործնական, լաբորատոր պարապմունքներ 16
Ամփոփիչ խոսք 17

Նախաբան

Արա Ամիրյան, ՈԳԱ որակի կառավարման բաժնի վարիչ

Էլեկտրոնային հասցե՝ ara.k.amiryan@gmail.com

«Ուսանողների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման նպատակով դասախոսների և ամբիոնների համար նախատեսված այս ուղեցույցը մշակվել և պատրաստվել է ՀԱԱՀ որակի գնահատման և ապահովման (ՈԳԱ) կենտրոնի կողմից 2018-2019 ուսումնական տարում համալսարանի ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների հիման վրա: Սույն ուղեցույցում բերված մտքերն ու առաջարկությունները իրականացվել են հարցումների արդյունքների խոր վերլուծության արդյունքում: ***Կարևոր եմ համարում նշել, որ հեղինակի կողմից ուսումնասիրվել և բարձրացվել են հարցեր՝ համեմատելով և վերլուծելով ուսուցման դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն մոտեցումների առավելություններն ու թերությունները****, տրվել են առաջարկություններ, որոնք կարծում եմ օգտակար կլինեն ամբիոնների և դասախոսների համար:*

ՈԳԱ կենտրոնը վստահ է, որ իր շահակիցների ակտիվ ներգրավվածությամբ կապահովի սույն ուղեցույցի կիրառելիությունը, ինչը կնպաստի ՈԳԱ կենտրոնի առաքելության իրականացմանը՝ խթանել ՀԱԱՀ կրթության որակի ապահովման ներքին համակարգի կայացումը և որակի մշակույթի շարունակական զարգացումը:

ՈԳԱ կենտրոնը շնորհակալություն է հայտնում փաստաթղթի մշակման գործընթացի բոլոր մասնակիցներին»:

Հեղինակի խոսք

Լիլիթ Ավդալյան, սոցիոլոգ

Էլեկտրոնային հասցե՝ l.avdalyan@anau.am

«Երբ այս տարվա սկզբին սկսեցի աշխատանքս Ագրարայինում, ինձ համար բացահայտեցի մի նոր իրականություն: Համալսարանի՝ տասնամյակների ընթացքում զարգացած մշակույթը դարձավ իմ հետաքրքրությունների մշտական առարկան, և ես սկսեցի ուսումնասիրել այն ուժեղ կողմերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ այսօրվա և վաղվա բարեփոխումների համար:

Նախևառաջ ամուր կապերն են աշխատակիցների միջև, որոնք արտահայտվում են ցանկացած խմբային քննարկման ժամանակ. Ագրարայինը ունի այն, ինչ ցանկացած կազմակերպություն ձգտում է զարգացնել՝ ***համախոհների համայնք****. այս համայնքը պետք է գիտակցի, որ Հայաստանում գյուղատնտեսական կրթության և գիտության որակը բարձրացնելու առաքելություն ունի:*

Այնուհետև, որպես սոցիոլոգ, ես չէի կարող չնկատել այդ ամուր կապերի հիմքում ընկած հաղորդակցության սիմվոլիկան. դա ***հումորն*** *է: Ցանկացած դժվար իրավիճակում* ***ագրարայինցին*** *կարողանում է տեղին կատակել և փոխանցել դրական տրամադրություն:*

Ուսանողների հարցում անհրաժեշտ է նշել, որ վերջիններս առանձնանում են երիտասարդներին հատուկ լավատեսությամբ: Իսկ Ագրարայինի ուսանողները արտահայտում են դասախոսների նկատմամբ վստահություն, ձգտում են նորարարությունների, ցանկանում են մասնակցել Համալսարանի զարգացումներին, դառնալ լավ մասնագետ և ավելի լավը դարձնել աշխարհը: Միևնույն ժամանակ այս երիտասարդները աչքի են ընկնում իրենց պրագմատիզմով՝ պահանջելով այն գիտելիքն ու հմտությունը, որը անհրաժեշտ է լինելու աշխարհին արդեն վաղը: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ այս ուսանողները շնորհակալ են:

Ուստի հարգելի՛ դասախոսներ, ուսումնական գործընթացի պատասխանատուներ,

Մի կողմից Դուք ունեք ***շնորհակալ*** *ուսանողներ, ովքեր գնահատում են իրենց ապագայի համար Ձեր յուրաքանչյուր ներդրումը: Նրանք բաց են նորարարություններին և ձգտում են զարգացման:* ***Ձեր օգնությամբ:***

Մյուս կողմից Դուք ունեք ***պահանջատեր*** *ուսանողներ, ում կարծիքը և կարիքները պետք է ուսումնասիրեք և հաշվի առնեք Ձեր ամենօրյա աշխատանքներում:*

Այսպես է հնարավոր հասնել ուսանողակենտրոն ուսուցման:

Հուսով եմ այս ուղեցույցը կօգնի Ձեզ ավելի լավ հասկանալ ուսանողներին»:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«Դասախոսակենտրոն» մոտեցումն ուսանողների շրջանում

Դրական կողմեր նշելիս ուսանողներն ավելի հաճախ կենտրոնացել են դասախոսի հետ հաղորդակցության, դասախոսի մոտեցման ու կարողությունների վրա, քան առարկայի, ինչը ենթադրում է, որ՝

ուսանողների ուսումնական հաջողություններում մեծ դեր պետք է ունենան հենց դասախոսները: Նրանք, դրսևորելով իրենց լավագույն մասնագիտական կարողությունները դասավանդման – ուսումնառության գործընթացում, պետք է ուսանողին առավելապես ընդգրկեն գործընթացում, միաժամանակ ոգեշնչելով ուսանողին դրդեն ինքնակրթության:

Ուսանողի պատկերացումները յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ

Գնահատվում են արդիական և առօրյայում կիրառելի առարկաները, ինչպես նաև գործնական պարապմունքները, ինչը ցույց է տալիս, որ՝

ուսանողն առարկան արժևորելու համար պետք է հասկանա յուրաքանչյուր առարկայի նշանակությունը, կիրառության ուղղությունները, կարողանա կապել առարկայից ստացած գիտելիքներն ու հմտություններն իր առօրյա կենսագործունեության հետ:

Ուսանողներն առաջարկել են իրականացնել մասնագիտական առարկաների փոփոխություններ, այն է՝ մասնագիտական առարկաների և գործնական պարապմունքների ժամերի ավելացում, ինչպես նաև առարկայի տեսական ու գործնական մասերի փոխկապվածության ապահովում, ինչը ցույց է տալիս, որ՝

- *ուսանողներն ավելի շատ կարիք ունեն ձեռքբերած գիտելիքների գործնական նշանակության և օգտակարության բացահայտման,*
- *ինչպես նաև կոնկրետ առարկայի՝ իրենց մասնագիտության մեջ օգտագործելու ունակություն:*

Առաջարկ է հնչել կրճատել առարկայի դասաժամերը (օրինակ՝ «փորձագետ լինելու համար այդքան էլ անհրաժեշտ առարկա չէ»):

Անհրաժեշտ է ուսումնական տարվա սկզբում կամ առարկայի դասավանդման սկզբում ուսանողներին ներկայացնել առարկայի անհրաժեշտության օբյեկտիվ հիմքերը՝ ցույց տալով առարկայի նշանակությունը մասնագետ դառնալու համար:

Անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ մասնագիտական առարկաների դասավանդման նշանակությունը յուրաքնաչյուր մասնագիտության համար և ըստ այդմ որոշել, թե որ ուսումնական տարվա ընթացքում և երբ իրականացնել դրանց ուսուցումը: Այս խնդրի առավել ցայտուն օրինակ է երրորդ կուրսում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը:

<u>Ուսանողների մասնակցությունը մասնագիտական և առարկայական կրթական ծրագրերի բարեփոխումներին</u>

Ուսանողները տարբեր ասպեկտներով անդրադարձել են մասնագիտական կրթական ծրագրերի օպտիմալացմանը. առանձնացնենք մի քանի կետ՝

- Ոչ մասնագիտական առարկաների քչացում, դասաժամերի կրճատում,
- Որոշ առարկաների դեպքում քննության նպատակային չլինել,
- Մասնագիտական առարկաների ավելացում,
- Որոշ մասնագիտական առարկաների դասաժամերի ավելացում,
- Գործնական, լաբորատոր պարապմունքների ավելացում,
- Առարկաների՝ ըստ բարդության և ուսումնական տարվա համապատասխանության ապահովում:

Տվյալ դիտարկումները ցույց են տալիս, որ՝

ուսանողները պատրաստակամ եմ մասնակցելու և ցանկություն ունեն կարծիք արտահայտելու մասնագիտական կրթական ծրագրերի առարկաների ընտրության, ծանրաբեռնվածության որոշման գործընթացին: Մասնավորապես առաջարկվում է մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխումների գործընթացը դարձնել բաց՝ ուսանողների դիտորդական հնարավորությամբ, ինչպես նաև ստեղծել մեխանիզմներ ուսանողների կարծիքը հաշվի առնելու:

Որոշ առարկաների հարցում ուսանողները հակասական մոտեցումներ ունեն. նույն առարկան ոմանք առաջարկում են ավելացնել ժամաքանակը, ուրիշները՝ կրճատել: Մեկ այլ առարկայի մասով՝ մի դեպքում ավելացնել ժամաքանակը, այլ դեպքում՝ *տեղափոխել ավելի ցածր կուրսեր:*

Այս հարցը կարող է ունենալ տարբեր պատճառներ, ինչպես օրինակ կուրսում ուսանողների կարողությունների բևեռացումը կամ կոնկրետ առարկայի մասին ուսանողների դիրքորոշումները, նյութի մատուցումը, առարկայի՝ մասնագիտությանը համապատասխանությունը կամ ներառված թեմաները: Այնուամենայնիվ յուրաքանչյուր դասախոս կարիք ունի հավաստիանալու, որ խմբի յուրաքաչնյուր ուսանող հասկանում է առարկայի նշանակությունը մասնագիտության համար, պատկերացնում է առարկայի

շրջանակներում դասավանդվող թեմաների փոխկապակցվածությունը և մասնավորապես տվյալ առարկան տվյալ ուսումնական տարում դասավանդելու օբյեկտիվ հիմքերը:

Ուսանողներն առաջարկում են, օրինակ, «ինֆորմատիկա» առարկայի ուսուցումը հարմարեցնել իրենց մասնագիտությանը, ինչը ցույց է տալիս, որ՝

ուսանողներն ունեն ընդհանուր մասնագիտության մեջ մտածելու կարողություն. նման ուսանողներին անհրաժեշտ է ներգրավել մասնագիտական և առարկայական ծրագրերի օպտիմալացման աշխատանքներին, ինչը կնպաստի մի կողմից ուսանողների շրջանում իրենց մասնագիտության վերաբերյալ ավելի ճշգրիտ պատկերացում կազմելուն, մյուս կողմից՝ ուսանողների մասնակցությունը թույլ կտա փոփոխություններում հաշվի առնել անմիջական ազդակրի /շահառուի կարծիքը:

Առարկայի և մասնագիտության նյութատեխնիկական կարիքների գնահատում



Ուսանողների շրջանում կա բացասական արձագանք կապված ֆիզիկական պայմանների հետ՝ թե՛ ջեռուցման համակարգի բացակայության, թե՛ նյութատեխնիկական սարքավորումների ու բազայի հետ, ինչը ցույց է տալիս, որ՝

ամբիոնները, ֆակուլտետները կարիք ունեն իրականացնելու ինստիտուցիոնալ կարողությունների գանահատում և մասնագիտական ու առարկայական կրթական ծրագրերի պահանջների հետ համեմատություն, եթե արդեն ամբիոնը նման գործողություն չի իրականացրել:

Նյութատեխնիկական բազայի և սարքավորումների՝ ըստ առարկայական ծրագրերի որոշման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել ուսանողների կարծիքն առկա իրավիճակի մասին, ինչպես նաև հասկանալ նրանց՝ որպես ուսումնառողի կարիքները, օրինակ ինքնուրույն փորձեր անելու հնարավորության անհրաժեշտությունը, ինչը ակամայից հուշում է սարքավորումներից օգտվելու կանոնների սահմանման ու տարածման անհրաժեշտության, ինչպես նաև դասախոսների համար՝ սարքավորումներից օգտվելու ուսանողի ազատության հստակեցման մասին:

Մասնագիտական գրականություն, հայերեն

Ուսանողների նշումներում է եղել նաև հայերեն մասնագիտական գրականության կարիքը:

Անհրաժեշտ է իրականացնել դասախոսների հետ քննարկումներ՝ կապված գրականության տրամադրման սկզբունքների և նպատակների հետ: Մասնավորապես անհրաժեշտ է սահմանել հայերենով և օտար լեզուներով մասնագիտական տերմինաբանության տիրապետման անհրաժեշտությունը՝ ըստ ազգային և միջազգային շուկայի պահանջների, ըստ այդմ՝ փնտրել ճանապարհներ հայերեն գրականության ստեղծման և / կամ օտար լեզուներով գրականության ընթերցման պրակտիկայի ներդրման:

ՈՒսանողի կողմից կրթական գործընթացի ընդհանուր պատկերի՝ փազլի հավաքում

Ուսանողները բացասական արձագանք հայտնել են՝ կապված տեսասարքերի բացակայության հետ և առաջարկել դասերն անցկացնել տեսասարքերի կիրառմամբ: Առաջարկություններ են արվել նաև բուն դասավանդում – ուսումնառություն գործընթացի տարբեր ասպեկտների բարելավման հետ կապված, օրինակ անդրադարձել են լաբորատոր ժամերի անցկացման արդյունավետության բարձրացմանը, գործնական դասաժամերի ավելացմանը, հավելյալ գրականության տրամադրմանը, ինչը ցույց է տալիս, որ՝

ուսանողները, որպես խումբ, դիտարկում են դասավանդում-ուսումնառություն գործընթացն իր ամբողջականության ու տարբեր կոմպոնենտների փոխկապվածության համատեքստում: Ուսանողների նման խումբը, ով կենտրոնացած / ֆիքսված չէ գործընթացի մի կողմի կամ ասպեկտի վրա միայն, այլ կարող է տարբեր կողմերից մոտենալ նույն գործընթացին, կարող է աջակցել դասախոսին ուսանողների համար «ներշնչող» մթնոլորտ ձևավորելու:

Անկողմնակալ, չանձնավորված վերաբերմունք ուսանողների հանդեպ

Որոշ դասախոսների դեպքում եղել են ծայրահեղ հակասող մեկնաբանություններ, օրինակ միևնույն դասախոսի՝ ուսանողի հանդեպ վերաբերմունքն որոշ ուսանողներ գնահատել են դրական, այլ ուսանողներ՝ բացասական, ինչը կարող է հուշել (սակայն ոչ պնդել) այն մասին, որ՝

որոշ դասախոսներ ուսանողների հանդեպ կարող են ունենալ ընտրողական վերաբերմունք: Անհրաժեշտ է մշակել ուսանողների շրջանում բացասական արձագանք ստացած դասախոսների ուսանողների հետ հաղորդակցության կամ դասավանդման մեթոդիկայի հզորացման միջոցառումներ, օրինակ՝ վերապատրաստումներ, փորձի փոխանակում: Հարգել ուսանողին՝ որպես **չափահաս** մարդու

Եղել է դեպք, երբ դասախոսը թույլ չի տվել ուսանողին «դասից դուրս գալ», ինչը հուշում է, որ՝

դասախոսի և ուսանողի համար կարգապահական սկզբունքների, դասախոսի լիազորությունների և ուսանողի իրավունքների մասով առկա է եղել իրազեկվածության և ընկալումների անհամապատասխանություն: Անհրաժեշտ է ուղղահայաց կառավարման համակարգում հստակեցնել նման սկզբունքների, լիազորությունների և իրավունքների սահմանման պատասխանատու օղակներին, համեմատություն անցկացնել իրավական կարգավորումների հետ և տեսանելի դարձնել միևնույն աշխատանքային սկզբունքները բոլորի համար: Նմանատիպ գործընթացների արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է կիրառել դասախոսների և ուսանողների մասնակցությամբ գնահատման

գործիքներ, ինչը կնպաստի հաղորդակցության համընդհանուր «կոդ»-երի ներանձնայնացմանը:

Դասախոս-ուսանող երկխոսություն, **երկկողմանի հաղորդակցություն**

Որոշ դեպքերում ուսանողները նշում են, որ դասախոսն աշխատում է մի խումբ ուսանողների հետ՝ մյուսներին չներգրավելով դասապրոցեսում: Նման արձագանքը հուշում է *ոչ միայն և ոչ այնքան դասախոսի՝ ուսանողներին դասապրոցեսում ներգրավելու հմտության բացակայության մասին, այլ ավելի շուտ դասախոս-ուսանող **երկխոսության** բացակայության մասին, երբ դասախոսը շահագրգռված կլինի իմանալ սեփական առարկայի մասին ուսանողների կարծիքը մի կողմից, մյուս կողմից ուսանողը ցանկություն և պատրաստակամություն կունենա իր կարծիքը բարձրաձայնել:*

Թեստային համակարգի ամբողջական ներդրումից հետո, իրականացված իրազեկիչ միջոցառումների փորձը և արդյուքները հաշվի առնելով, անհրաժեշտ է դասախոսների աշխատանքային պարտականություններում ներառել ուսանողների կարծիքի ուսումնասիրությունը, մյուս կողմից ուսանողներին դրդել կարծիքի բարձրաձայնմանը՝ ստեղծելով ուսանող-դասախոս առողջ երկխոսության հիմք:

Բուհում ընթացող գործընթացների տեսանելիության բարձրացում ուսանողների շրջանում

Որոշ դեպքերում ուսանողները բաց հարցերում արտահայտել են կարծիք կամ ցանկություն՝ կապված բուհում գլոբալ գործընթացների կամ պայմանների հետ, ինչը վկայում է այն մասին, որ՝

անհրաժեշտ է իրականացնել ուսանողների կարծիքի ուսումնասիրություն բուհում տեղի ունեցող գործընթացների, բուհ-ուսանող հաղորդակցության, ուսանողի կարիքների և այլ հարցերով:

Լեկցիա գրելը՝ հանուն ոչ էլեկտրոնային նյութերի ձեռքբերման

Որոշ դեպքերում ուսանողները նշում են, որ անհրաժեշտ է վերականգնել լեկցիա գրելու պրակտիկան, քանի որ էլեկտրոնային հարթակից օգտվելը հասանելի չէ համակարգիչ չունեցող ուսանողների համար, և առհասարակ ուսանողները նախընտրում են տպագիր գրականությունից օգտվել: Այդ նպատակով առաջարկում են, որպեսզի համալսարանն ապահովի տպելու և պատճենահանելու անվճար հնարավորություն ուսանողների համար:

Անհրաժեշտ է ուսումնասիրել լեկցիա գրելու պրակտիկայի դադարելուց հետո ուսանողների գնահատականների դինամիկան՝ հասկանալու համար, արդյոք տպագիր / ձեռագիր գրականություն / նյութեր չունենալը կարող է ազդել ուսանողների առաջադիմության վրա:

«Դասից դուրս» կատեգորիայի ըմբռնում

Ուսանող-դասախոս հարաբերություններում առանձին կատեգորիա է «դասից դուրս հարցերին պատասխանելը» կամ «դասից դուրս շփումը», ինչը ազդում է դասախոսի մասին ուսանողների ընկալումների ձևավորման կամ չի բացառվում, որ ուսումնական պրակտիկա չհանդիսացող «դասից դուրս շփումը» կրի իր մեջ կոռուպցիոն ռիսկեր:

Անհրաժեշտ է ուսանողների և դասախոսների շրջանում հստակ սահմանել «դասից դուրս» ուսանողի՝ դասախոսին դիմելու հնարավորությունները և դասախոսի արձագանքելու

պարտականությունները: Եթե դասախոսը պետք է արձագանքի ուսանողի դիմումներին, սահմանել կարգ և այդ մասին ուսանողին տեղեկացնել:

Մյուս կողմից անհրաժեշտ է հասկանալ «դասից դուրս» շփման և հարցերին պատասխանելու ուսանողների կարիքների հիմքային պատճառները. օրինակ՝ դասաժամը չի բավականացնում ուսանողի համար յուրացնել նյութը և հարցեր ձևավորել, դասերի ժամանակ չի կիրառվում ինտերակտիվ քննարկումների մեթոդ կամ այլ խնդիրներ:

Քննություններ. լինել թե չլինել

Առաջարկ է ներկայացվել քննությունները չանցակցնել համակարգչային տարբերակով, քանի որ «ոչ բոլորն են իվիճակի երկար ժամանակ նստել լարված համակարգչի առջև»: Առաջարկը վկայում է այն մասին, որ ուսանողն ընկալում է համալսարանի դերը՝ բացառապես որպես գիտելիք փոխանցողի: «Համակարգչի առջև» «լարված նստել»-ը ժամանակակից դիտարկվում է որպես soft skill ցուցիչ, որը որոշիչ կարող է լինել աշխատանք գտնելու, աշխատանքային միջավայրում հարմարվելու տեսանկյունից:

Քննությունների՝ թեստային մեթոդին անցում կատարելու ժամանակահատվածում անհրաժեշտ է իրականացնել ուսանողների շրջանում իրազեկիչ աշխատանքներ՝ շեշտադրելով թեստային տարբերակի կիրառման օգուտները:

Լինում են կարծիքներ, որ առարկան պետք է լինի ոչ թե քննական, այլ ստուգարք: Անհրաժեշտ է հասկանալ ուսանողների կարծիքը ստուգարքային և քննական առարկաների վերաբերյալ՝ իրենց մասնագիտության մեջ ունեցած նշանակության, կամ ստուգարքին / քննությանը պատրաստվելու տեսանկյունից: Ինչպես նաև դիտարկել բուն գնահատման երևույթի ընկալումները դասախոսների և ուսանողների շրջանում:

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսանողների շրջանում անցկացված գնահատման ժամանակ ուսանողները, պատասխանելով «Ինչն է Ձեզ առարկայի կամ դասախոսի մեջ **ամենաշատը** դուր գալիս» բաց հարցին, առավել հաճախ անդրադարձել են դասախոսի դասավանդման առանձնահատկություններին: Դասավանդումն ուսանողներին դուր է գալիս մի շարք դեպքերում: Անդրադառնանք յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Դասախոսը պատասխանում է ուսանողների հարցերին

Այս պատասխանի առկայությունն ինքնին հուշում է, որ ուսանողները համալսարանում հանդիպել են նաև հակադարձ դեպքերի, երբ որոշ դասախոսներ չեն պատասխանում ուսանողների հարցերին, ինչն արդեն հանդիսանում է ցանկացած տեսակի **դասավանդման կանոնների խախտում**: Դա երևում է նաև ուսանողների բացասական մեկնաբանություններում: Յուրաքանչյուր դասախոս պետք է հիշի, որ ցանկացած ուսանող առարկայի շրջանակներում կարող է հարցեր տալ ուսումնասիրվող կամ հարակից թեմաների վերաբերյալ, և դասախոսի աշխատանքային պարտականությունների շրջանակում է ուսանողի հարցերին պատասխանելը, քանի որ այդպես է զարգանում ուսումնական միջավայրը:

Դասի մատչելի, հասանելի, լավ բացատրելը

Գնահատման ժամանակ եղել են դեպքեր, երբ միևնույն դասախոսի վերաբերյալ ուսանողները նշել են հակասական կարծիքներ. ոմանց համար դասախոսը լավ է բացատրում, ոմանց համար ոչ: Պատճառները, իհարկե, կարող են լինել բազմազան, սակայն դասախոսն առաջնահերթ պետք է փորձի **ներգրավել ամբողջ լսարանին՝** դասը վարելով ինտերակտիվ ձևով և հասկանալով յուրաքնաչյուր ուսանողի բացերը: Ուսանողների նկատմամբ **անհատական վերաբերմունքը** թույլ կտա հետաքրքրել և մոտիվացնել ուսանողներին և օգնել նրանց ձևավորել առարկայի շրջանակներում անհատական զարգացման ուղին:

Դասախոսի դասավանդման ոճը, մոտեցումը

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմում կան դասախոսներ, ովքեր ունեն ուսանողների շրջանում դասավանդման դրական փորձ: Այն հանգամանքը, որ որոշ դեպքերում միևնույն

դասախոսը կարող է տարբեր լսարաններում հակասական արձագանքներ ստանալ, հուշում է, որ դասախոսները պետք է քննարկեն ոչ միայն իրենց դասավանդման մոտեցումները, այլև կիսվեն միմյանց հետ տարբեր խմբերի հետ աշխատելու իրենց լավագույն փորձով: *Այս առումով առաջարկվում է ձևավորել դասախոսների համար ներքին խորհրդատվության հարթակ, որտեղ կարող են փոխանակվել դասավանդման լավագույն փորձով և աջակցել միմյանց*:

Դասավանդման նոր մոտեցումներ, մեթոդներ

Քանի որ **դասավանդում** երևույթը գտնվում է ուսանողների ուշադրության կենտրոնում, վերջիններս հանդես են եկել նաև դասավանդման բարելավման մի շարք առաջարկություններով: Մասնավորապես անդրադարձել են *ինտերակտիվ մեթոդների* կիրառությանը, *դիդակտիկ նյութերի* օգտագործմանը, *տեսասարքերի* միջոցով *ժամանակակից տեխնոլոգիաների* ծանոթացմանը:

Ուսանողները դրական արձագանք են տալիս, երբ *«դասի ժամանակ ուսանողների մասնակցությամբ արվում են վերլուծություններ»*, ինչը մոտիվացնում է նրանց և ավելի խորը գիտելիքներ տալիս առարկայի մասին:

Երբեմն ուսանողներն առաջարկում են **վերադարձնել լեկցիաները**, և դա ունի իր պատճառները՝

- Որոշ դեպքերում ուսանողները նշում են, որ որոշ դասախոսներ լեկցիա գրելուց ավելի շատ են բացատրում նյութը: Այս խնդրի հիմքում առաջնահերթ ընկած է այն, որ այդ դասախոսները հմտորեն չեն օգտագործում ինտերակտիվ դասախոսությունների, քննարկումների, բանավեճերի և այլ մեթոդները դասի ժամանակ: Դասախոսների շրջանում կա թյուրըմբռնում, որ «ուսանողակենտրոն» ուսուցման հետևանքով իրենք լեկցիա չեն թելադրում, սակայն «ստիպված են փոխարենը երկու անգամ ավելի շատ խոսել, ինչից շահում է ուսանողը»: Հարկ ենք համարում նշել, որ դասախոսի երկու անգամ ավել խոսելը չի նշանակում դասը վարել ուսանողակենտրոն մոտեցմամբ, հակառակը՝ ավելի դասախոսակենտրոն միջավայր է ձևավորվում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այս մոտեցումը թույլ է տալիս կենտրոնանալ ուսումնառողի և նրա կարիքների վրա և ավելի քիչ շեշտադրել դասախոսի ներդրումները:

Ուսանողակենտրոն ուսուցմանը բնութագրական են դասավանդման ինովացիոն մեթոդներ, որոնք կազմակերպում են ուսումնառությունը դասավանդողի և այլ ուսումնառողների հետ ակտիվ հաղորդակցության միջոցով. ուսանողը հանդիսանում է գործընթացի ակտիվ մասնակից, զարգացնում է խնդիրների լուծման, քննադատական և ռեֆլեքսիվ մտածողության հմտություններ:

- Երբեմն **Moodle հարթակում** չեն տեղադրվում «ծավալուն» հայերեն նյութեր, որոնց վրա հիմնվելով ուսանողը կարող է «քննության պատրաստվել»: Այստեղ նույնպես կան թաքնված խնդիրներ՝
    - Ուսանողը հաճախում է համալսարան ոչ թե ուսումնական գործընթացի համար, այլ քննության և գնահատականի. սա տարածված խնդիր է հայաստանյան գրեթե բոլոր պետական բուհերի մասշտաբով, սակայն հնարավոր է փոխել դասախոսների առաջնային ներազդման միջոցով: Անհրաժեշտ է, որպեսզի դասախոսներն ուսանողների շրջանում ձևավորեն սովորելու, լավ մասնագետ և քաղաքացի լինելու արժեքը և ոչ պարզապես բարձր գնահատական ստանալու: Համալսարանում պետք է բացառվի ուսանողների պիտակավորման սովորությունը և յուրաքանչյուր ուսանողի հետ աշխատելիս դասախոսը պետք է ցուցաբերի անհատական մոտեցում, ինչը բարձր է գնահատվում ուսանողների կողմից:
    - Ուսանողը պատրաստ է կարդալ միայն հայերեն. այս առումով անհրաժեշտ է որոշել օտար լեզուներով մասնագիտական տերմինաբանության տիրապետման անհրաժեշտության հարցը և / կամ ապահովել հայերեն մասնագիտական գրականություն:

Ուսանողները առաջարկում են նաև նոր մոտեցում դասախոսությունների կազմակերպմանը, ինչպես օրինակ «դրսից դասախոսների» կողմից անցկացվող դասախոսություններ, կամ դասերը անցկացնել լսարանից կամ համալսարանից դուրս՝ ըստ թեմայի համապատասխանության:

<u>Դասախոսն աջակցում է ուսանողին</u>

Ուսանողները հատկապես արժևորում են, երբ դասախոսը «օգնում է ուսաանողին յուրացնել նոր գիտելիք», «զարգացնել վերլուծական մտածելակերպ», «խթանում է ուսանողների ինքնուրույնությունը»:

Ուսանողները, հիմնականում լինելով երիտասարդ, մշտապես ունեն իրենց դասախոսների մասնագիտական աջակցության կարիքը: Քանի որ դասախոսն ավելի հստակ պատկերացում ունի առարկայի կառուցվածքի և մասնագիտության համա առարկայի նշանակության վերաբերյալ, նա պետք է կարողանա ճիշտ ուղղորդել ուսանողին ուսումնառության ընթացքում:

«Դասից դուրս» աջակցություն, շփում

Դասախոսն անցկացնում է պարապմունքներ կամ պատասխանում է ուսանողների հարցերին «դասից դուրս», կամ «դասից դուրս օգնում է **ցանկացած հարցում**»: *Անհրաժեշտ է հասկանալ՝ ինչ նկատի ունեն ուսանողները **«դասից դուրս»** ասելով, արդյոք նկատի ունեն խորհրդատվությունները, որոնք յուրաքանչյուր դասախոս իր ծանրաբեռնվածության մեջ նախատեսված ունի, թե նշանակում է աշխատանքային օրվա ավարտից հետո դասախոսի կողմից աջակցության տրամադրում և ի՞նչ բնույթի աջակցության:*

- *Ամբիոնը պետք է քննարկում ծավալի դասախոսների հետ և հասկանա «դասից դուրս» ինչ աջակցություն կարող է տրամադրել դասախոսն ուսնողներին,*
- *Մյուս կողմից անհրաժեշտ է տեղեկացնել ուսանողներին իրենց իրավունքների մասին՝ հստակ բացատրելով դասախոսին դիմելու իրենց հնարավորությունը և պայմանները:*



Ուսանողը՝ որպես ակտիվ մասնակից

Թեպետ ուսանողները ձգտում են ուսանողակենտրոն միջավայրի, դա հատկապես արտացոլվում է «դասախոսն օգնի գիտելիքի յուրացմանը», «դրդի ինքնուրույնության» պատասխաններում, այնուամենայնիվ դեռևս շարունակում են առաջնորդվել դասախոսակենտրոն մոտեցմամբ՝ դիտարկելով դասախոսին՝ որպես գործընթացի առաջատար, այնինչ ուսանողակենտրոն մոտեցումը դասավանդում - ուսումնառություն գործընթացում դասավանդողին և ուսումնառողին հավասար դերակատարում է հատկացնում: *Դասախոսները, օգտվելով ուսանողների շրջանում իրենց հեղինակավոր դիրքից, կարող են զարգացնել իրական ուսանողակենտրոն միջավայր:*

Պրակտիկա, գործնական, լաբորատոր պարապմունքներ

Համալսարանում առկա են բազմաթիվ առարկաներ, որոնց շրջանակներում կազմակերպվող պրակտիկայից, գործնականից և լաբորատորիայից ուսանողները բավարարված չեն:

<u>Ամփոփիչ խոսք</u>

Մարիամ Մովսիսյան, ՈԳԱ կենտրոնի տնօրեն

«Բացահայտումները, որոնք իրականացվել են բաց հարցերի, ֆոկուս-խմբային քննարկումների վերլուծության արդյունքում, ակնհայտ են դարձնում, որ մեր ուսանողները պատրաստ են դառնալ լիարժեք մասնակից ուսումնական գործընթացի պլանավորումից մինչև իրականացում:

Ուղեցույցում նշված առաջարկությունները և բարձրացված խնդիրները նաև ցույց են տալիս, որ առկա է հաղորդակցման լեզվի, հասկացությունների ճշգրտման անհրաժեշտություն, քանի որ հաճախ ուսանողի կողմից տրված դրական կամ բացասական գնահատականները երկակի են ընկալվում: Ուղեցույցը նախևառաջ հանդիսանում է քննարկման նյութ՝ ուղղված և՛ պրոֆեսորադասախոսական կազմին, և՛ ուսումնական վարչությանը, և որակի ապահովման և գնահատման կետրոնին՝ նպատակ ունենալով բարելավել և՛ դասավանդման որակը, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքներն ու պահանջները, և՛ որակի ապահովման և գնահատման գործիքները, ինչպես նաև նպաստել կրթական բարեփոխումներում մասնակցային սկզբունքի ապահովմանը:

Նշված առաջարկությունները ուղղված են ձևավորել այնպիսի ակադեմիական միջավայր, որտեղ կգործի ակադեմիական ազատությունը, բարեվարքությունը, ուսանողակենտրոն մոտեցումը, ներառականությունը»: